




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՈՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական,
և Մանկավարժական



1902 ՅՈՒՆՈՒԱՐ 10 — ԹԻԻ 9

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԵՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هزار ایداق
مجموعه علوم

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ ԶԹ

ԵԹ ՅՈՒՆՈՒՍԻ 1902



Սիրամարգի պես հայտն է

ԳՆԱՍ ՄԵ

Պարոն Շարլո՝ ութը ինը տարեկան պզտիկ մանջուկ մըն էր։ Թէեւ սիրտը բարի, բայց քիչ մը մեծամիտ էր։ Հայրն ու մայրը շատ հոգ կ'ընէին այս պահասութեան համար։ Ասոնք գիւղի մը մօտ ընդարձակ ագաքով մը կը բանեցնէին։ Շարլօ պատիւին չէր կերցնէր երկրագործներու մէջ ապրիլ ու ձեռքի ախատութիւններ կատարել։ Ծնողքը կը մտածէին թէ ինչպէս կրնան տըղուն այդ գէշ բնաւորութիւնը ուղղել։

Մօտակայ գիւղին մէջ տարին անգամ մը մեծ տոնավաճառ կ'ըլլար։ Շարլօ ծնողացը հետ հոն գնաց տեսնելու համար այն հազարումէկ տեսակ առարկայները որոնք կարծես աշխարհիս չորս կողմերէն հոն կը թափէին։ Լարախաղացներու, անպարարներու խումբ մը շատ մը գիւղացիներ գլուխին ժողոված գուարճալի փորձեր կը կատարէին։ Շարլօթի հայրն ալ վրանի մը տակ տարաւ զինքը ուր ներկայացում մը կը արուէր, եթէ կարելի էր այս անունը տալ մտած տեղերին թատրոն մըն էր։ Բեմին վրայ ոսկեզօծ հագուստներով ձիաւոր մը կը պտըտկէր, գլուխը թաղիքէ սաղաւարտ մը դրած, փայտէ սուրը քովէն կախած։

— Զօրավար մը ըլլալու է, ըսաւ Շարլօ, ա՛խ, ի՛նչ աղւար է, ես ալ անոր պէս ըլլալի։

Դարձին, հայրիկին ու մայրիկին մէջտեղը հանգիստ կառքին մէջ բազմած, նոյն խօսքը քանի մը անգամ կրկնեց։

Յաջորդ օրը, կէս օրուան ճաշէն ետքը կամացուկ մը փախաւ ձեղնայարկն ելաւ։ Հոն դտաւ, հին ու մին բաներու մէջ ձրգուած ~~բայց~~ մայրնք, ջրհանկիւրի ուսնոցներ, թաթկահարի գօտի մը ու փայտէ սուր մը։

Փնտռածէն աւելին էր այս։ Շուտ մը վերան անցուց ատոնք՝ ինքնիրեն հիանալով։

— Հիմա՛, ըսաւ հեծանելի մը գտնենք։ Կամաց կամաց առանց շուկի վար իջաւ, վախճալով որ մէկը չտեսնէ զինքը։

Շիտակ ախոռ գնաց, հոն հինգ հատ խոշոր ձիեր կապուած կեր կ'ուտէին։ Շարլօ չի համարձակեցաւ անոնց մին առնել, հապա դնաց մէկ անկիւնը կեցած իշուկը առաւ, ինքն ալ կ'զգար որ ձիու մը վրայ

նստիլը աւելի փառաւոր բան է, բայց կը վախնար որ խոշոր կենդանիներ են։ Ուստի կամայ ահամայ դուրս հանեց հեղ կենդանին՝ երբ յանկարծ միտքը ինկաւ։

— Պեխերս դնելու մոռցայ, ըսաւ։

Ձիու մը պոչէն քանի մը թել բրցուց եւ հացի միջուկով շրթունքին վրայ փափկուց։ Վերջապէս իյնալով ելլելով իշուն կողմնալը նստաւ։

— Գիւղին մէջէն անցնի՞մ, հարցուց ինքնիրեն... չէ՛, առաջ անտառ ելլեմք քիչ մը կը բացուիմ։ — տի՛հ, ժողքէս։

Տունէն քիչ մը անդին անտառը կ'սկսէր։ Ապրիլի գեղեցիկ օրերէն մէկն էր, օդը ըսքանչելի, արեւը տաք։

Պարոն Շարլօ մարտիկի դիրք մը առեր էր, մարմինը ետ բռնած, գլուխը բարձր, էջուն ծանր քայլերուն հետ տատանելով։

Դեռ անտառ չի մտած, խեղճ մուրացիկ մը, ողորմելի հագուստներով՝ ծակ ծակ եղած գլխարկը իրեն երկնցուց։ Շարլօ բարկախիտ էր, մանաւանդ հիմակ իր դիրքին վայել ընթացք մը ունենալու էր։ Գրպանէն քառասուն փարանոց մը հանեց եւ մուրացիկին գլխարկը ձգեց։

— Շնորհակալ եմ, զօրավար, ըսաւ պապուկը, եւ ծառի մը վրայէն կտոր մը մամուռ բրցունելով, ա՛ռ, ըսաւ, ստիկա աւանջներուդ մէջ դիր և բոլոր կենդանիներուն լեզուն պիտի հասկնաս։

Շարլօ չհաւատաց թէեւ, բայց անգամ մը ուզեց փորձել։ Երկու դնդակներ շինեց եւ աւանջներուն մէջ դրաւ, հազիւ թէ քիչ մը յառաջացած էր, ճամբուն ձախ կողմը տեսաւ ճիւղի մը վրայ թառած աղւոր սիրամարդ մը, միւս կողմն ալ սագ մը կեցեր ջուրին մէջ որդեր կը կտցէր։

— Սիրամարդի պէս հպարտ, ըսաւ սագը։

— Սագի մը պէս ապուշ է, ըսաւ սիրամարդը։

Շարլօ քար կտրեցաւ։

— Ինձի համար ըլլալու չէ, ըսաւ, տի՛հ ժողքէս։

Քիչ մըն ալ անդին, չիկահաւ մը ծառերուն մէջէն կ'երգէր։

— Երկու տարի ճամբորդութիւն ըրեր եմ, ասանկ տխուր մը չի տեսայ։

Ճնճուկ մը քարերու կոյտի մը վրայ

թառեցաւ եւ ձիաւորին նայելով .

— Կապիկ մը ըլլալու է, ըսաւ :

Սխալելու տեղի չկար :

— Ա՛խ, անպիտան մուրացիկը, ըսաւ խեղճ տղան, վրաս խնդալ ուզեր է :

Եղ մը, խոտ կերած տեղէն զլուխը վերցուց եւ ծանրութեամբ մը ըսաւ .

— Փայլաջօ է :

Պարոն Շարլօ կրակ կտրեցաւ, սուրը քաշեց եւ սկսաւ օդին մէջ ճօճել : Յանկարծ ամբողջ անտառին մէջ խնդուք մըն է փրկողաւ :

Տղան, յուսահատ, մտրակները էշուն կողերը մղեց եւ սուրին տափակ կողմովը ականջներուն ուժով մը զարկաւ : Ժօքրէս ախրութեամբ գլուխը երեցուց եւ տղան սա խօսքերը լսեց .

— Հպարտ ըլլալը չէր բաւեր, հիմակ ալ չարութիւն կ'ընէ :

Շարլօ շատ կը սիրէր իշուկը :

— Դո՛ւն ալ, Ժօքրէս, ըսաւ :

Եւ արցունքի կաթիլ մը աչքերէն վար գլտորեցաւ :

Ճամբուն ծայրը խրճիթի պէս տեղ մը կար : Շարլօ դէպ ի հոն գնաց, էշէն վար ցատքեց, նետեց վրայէն խենդ բաները :

— Հիմա աղէկ է, ըսաւ ծայն մը :

Տղան նայեցաւ եւ դիմացը գետինը կեցած սարեակ մը տեսաւ :

— Տուն դառնանք, Ժօքրէս, ալ քեզի չեմ ծեծեր :

Կամացուկ մը վրան հեծաւ, եւ առանց մեծ հովեր աննելու, համեստ դիրքով մը եկած ճամբէն ետ դարձաւ, մէկ ձեռքով սանձը բռնած՝ միւսով էշը շոյելով :

— Անիկա չէ՞, ըսաւ կովը, սխալեր եմ : Զննդուիլը ծառի մը վրայ ելաւ ու ըսաւ .

— Ի՛նչ սիրուն տղայ է :

— Ասանկ աղւոր մանջուկ մը տեսած չունէի, երգեց շիկահաւը :

— Բնաւ ապուշի կերպարանք մը չունի, ըսաւ սիրամարդը :

Սաղը, փոսին մէջէն երկար վիզը տընկեց .

— Ա՛լ մեծամիտ ձեւերը ձգեր է, ըսաւ : Էշը ափսոնջները շարժեց ու դռչեց .

— Կեցցէ՛՛ պզտիկ ձիաւորս :

Պ Շարլօ՝ պապուկին տուած մամուռները նետեց, սենեակը ելաւ ու յաջորդ օր-

ուան պարտականութիւնները գրեց :

Հիմա որ մեծցած, խելացի պատանի մը է, կը խնդայ իր տղայութեան այս դէպքին վրայ, որովհետեւ ա՛լ գիտէ թէ բոլոր անցած դարձածը՝ իր հօր բարեկամ որովայնախօս էլօրիպօրիտի խրատով կարգադրընաւած էր :

Թարգմ.

Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՍՐՏԻ ԷՋԵՐ

ԿԱՂԱՆԳԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Սիրուն սոխակն իր սիրահոս

Ձեռնիկն խնայն կ'արձակեն հո՛ն հո՛ս,

Ներս վանդակէն երբ իր ոսկի՝

Աղւար նայուա՛ծք մը սողոսկի :

Այսպէս ահա՛ մեր բոյնն հուսա՛

Դրախտ դարձուց մե՛ծ հիւրը սա՛,

Զոր նհովան ղրկեց բնծայ,

Որ տղան երգէ՛, ժրպի՛, ցընծայ՝

Ոյց կը բերէ իր կաղանդչե՛

Գիրքե՛ր, միրգեր, ու մեկ ալ... չե՛ք :

Այս մեր մրսփի ալպօմն հիմա՛

Դրսաւ դե՛մք մ'ալ հոգեհրմա՛յ,

Ոյր պիտ' մընան յուշերը ջիւնջ՝

Մեր սրբին մեջ յաւե՛ս անջի՛նջ :

Կանգնեցէ՛ք, օ՛ն, սիրով համակ՝

Սրբազան Հօր մասչիւնք հիմակ,

Աջն համբուրել, որ մեզ օրհնէ,

Կ'ըսեն Կաղանդ՝ շնորհփի օ՛րն ե... ,

Մ. ԻՍՊԻՐԵԱՆ

ԾՆՆԴԵԱՆ ԳԼՍԱՐԿԸ

Դիւղը բնակող հարուստ տնձ մը քաղաք գալով, նորաձեւութեանց խառնութ մը մըտաւ կնոջն ու աղջկանը մէկ մէկ գլխարկ դնելու համար, զոր կ'ուզէր Ծնունդի օրը ընծայ տալ :

« Ձեզ կը թողում, ըսաւ խանութին տիրուհւոյն, որ գեղեցիկ երկու գլխարկ զատէք: »

Կինը անմիջապէս ամենագեղեցիկ երկու գլխարկ հանեց տուփէ մը: Այս գլխարկներն վերջին ծայր սիրուն արուեստական ծաղիկներով զարդարուած էին:

« Շիտակը աղուոր գլխարկներ են, գոչեց իշխանը. խիստ հաւնեցայ: Խնչ պիտի վճարենք: »

— Ոչինչ, պարոն, պատասխանեց կինը, ասոնց ստակը վճարուած է:

— Խնչ ըսել կ'ուզէք, յարեց մարդը, չեմ հասկնար:

Կինը պատասխանեց.

— Թերեւս կը յիշէք տակաւին թէ, շատ տարիներ առաջ օր մը պտուղի վաճառանոցը գտնուելով, աղքատ աղջիկէ մը նարինջ գնեցիք: Աղջկանը ոսկի մը տուիք, որպէս զի մնացորդը ետ տար, բայց նա պատասխանեց թէ, մայրը հիւանդ ըլլալով առանց ստակի վաճառանոց եկեր էր, եւ ոսկիին մնացորդը չէր կրնար ետ տալ: Այն ատեն ըսիք, « Լաւ ուրեմն, մնացածն ալ հիւանդ մօրդ համար վարդիլ: » Այս վեհանձն պարգեւը գանձ մը եղաւ տղուն ու մօրն համար, վստն զի առանց անոր չպիտի կարենային իրենց փոքրիկ առուտուրը շարունակել: Վերջը բարեբախտ ամուսնութեամբ մը այս խանութին տէր եղաւ այն խեղճ աղջիկը, որու մօրը օգնեցիք այնպէս ազնուութեամբ եւ այն աղջիկն ես եմ. ուստի, պարոն, հաճեցէք այս գլխարկները ընդունիլ իբր իմ երախտագիտութեանս մէկ փոքրիկ ապացոյցը:

Իշխանը լսածին զարմացաւ ու հիացաւ:

— Կ'ուզեմ որ կինս ու աղջիկս ձեզ ճանչնան, ըսաւ խանութպանուհին, ուստի կ'աղաչեմ որ այս գարնան մեր բնակարանը գաք մեզ անոնելու:

Բայց խանութպանուհին դղեակ չի գացած, ազնուականին կինն ու աղջիկն եկան զայն տեսնելու եւ անոր հետ բարեկամարարու:



ԱՄԱՂԱՆԵՐԸ

(ՆՄԱՆՈՂԱԲԱՐ)

Այսօր օրն է ԿԱՂԱՆԵՐԻ,
Սիրեր խանդով են լեցուն.
Սեղանք պատրաստ ամեն դի,
Պրտուղներով ակադճուն:

Մոմեր կարմիր ու ներմակ,
Կը սրվուեն բիւր կայծ ու ռոզ,
Մանկանց դեմքերն ալ համակ
Զրարք ժպտով են շէկնող:

* * *

Սա՛ տունին մեջ գեղազարդ
Շարժում մը կայ սեղոյագին,
Խումբ մը ջրղափ անհանդարս
Կը վազվրտեն ցնծագին:

Մայրը ձայնէ վայրապար.
« — Սիրուն ջրղափ, ա՛լ հերիք,
Դարբեցուցեք խաղ ու պար,
Հիմակ կուգայ ձեր հայրիկ: »


Բայց անոնք միշտ անհարբեր
Կայտեն, պարեն անդադար,
Սյո կոչուցեմ, անհամբեր.
Քաղեն իրենց մասն արդար:

Դուռը հընչէ նոյն պահուն,
Ջրղափ փութով վազեն վար.
Ա՛լ ցնծութիւնք է անհուն,
Եւ աչկունք ալ բոցավառ:

Հայրիկն է որ կ'ուգայ տուն.
Ձեռքը սիրուն մէկ փրկելի,
Ու ամենեւեմ ալ ժպտուն,
Կ'առնէ չորս չորս հաս պաշիկ:

Ապա պարպէ ակորժով,
Անոյ՛ գինին որ տայ խանդ,
Ու կը մաղթէ աշխուժով,
« — Շնորհաւոր նոր Կաղանդ: »

ԳԷ. ՍԻՄՔԷՇԵԱՆ



ԾՆՈՒՆԴԻ - ԿՕՇԻԿԸ



— Կեա՛նք իմ Ազնաւոր աղա



— Բայց գործը հոն է որ, ո՛սքս անոր մեջ
պիտի մտնայ՝ քի ան ոսքիս մեջ :



— Հա՛ քիչ մըն ալ



— Ը՛ հ՛



— Վա՛յ զլուխս , ո՛հ Գ —

ՄԱՆՈՒԿԻՆ ԱՌԱՋԻՆ ՎԻՇԵՑ

« Եղբայրս ինծի ետ կանչէ ալ ,
Ես չեմ կրնար մինակ խաղալ .
Ծաղիկ , մեղու բերէ ամառ , —
Ո՛ւր գացած է , ո՛հ , իմ եղբայր :

« Ծաղիկները կաճին արագ ,
Մեր սերմանած այդ ծաղիկներ .
Որքը հակի իր բեռին տակ ,
Ո՛հ , եղբայրս ինծի ետ բեր : » —

« Տղա՛յ , ձայնդ ան չի լսեր ,
Ալ չի կրնար ան քեզի գալ .
Դէմքն՝ որ գարնան պէս կը ժպտէր ,
Պիտ՝ չտեսնես երկրի վրայ ալ »

« Աստուած անոր տուաւ մի կեանք ,
Կեանք մը կարճուկ իրբեւ մէկ վարդ ,
Գնա՛ , պէտք է խաղաս մինակ ,
Երկինքի մէջ է քու եղբայրդ : » —

« Լքա՞ծ է ան ծաղիկ , թռչուն ,
Պարա՞պ տեղը պիտո՞ կանչեմ զայն ,
Երկար ամրան այն ժամերուն
Հոս պիտո՞ չի գա՞յ ան յաւիտեան :

« Վերջացա՞ծ են մեր պայտյոներ ,
Առուակին քով , անտառներէն ,
Իցի՛ւ , եղբայրս մինչ իմ հետ էր ,
Զայն սիրէի՛ իմ հոգիքն :

Ազատ Թարգ. Անգլ.է
ԱՇՈՏ Ս. ՊԱՋՊԱՋԱՆ

ՍԻՄԸՆՍ

ԿՈՒՋԵՄ ՇՈՒՏ ՄԸ ՄԵՇՆԱԼ ,

ՀԱՅՐԻԿԻՆ ՊԵՍ ԸԼԼԱԼ

(Միջո. մի համար)

Աչքերնիս վերցնենք անգամ մը մէկ
ակնարկով քնենք թէ կենդանական և բու-
սական աշխարհները ի՞նչ զգալի փոփոխու-
թիւններ կը կրեն տարուէ տարի : Անոնց
կրած փոփոխութիւնները զգալի ըլլալու
չափ կարեւոր են :

Տեսէք սա վեհաշուք , յաղթապանծ եւ
բարձրակատար կաղնին , որ առաջ մասաղ
տունկ մըն էր բայց հիմա հսկայ ծառ մը
եղած է :

Ոմանք փոքր մնալ կ'ուզեն , որպէս զի
շատ ապրին , նաեւ անոնք կը մտածեն թէ
մանկութեան գեղեցիկ ժամերը անմեղու-
թեամբ կը սահին ու կ'երթան : Բայց ես
կ'ուզեմ մեծնալ եւ օգտակար ըլլալ թէ՛ իմ
Տէրութեանս , թէ՛ իմ Ազգիս եւ թէ իմ ըն-
տանիքիս , հոգ չէ թէ ես քիչ մը պակաս
ապրիմ , բայց օգտակար ապրիմ :

Դարձեալ մեծնալով օգնել կ'ուզեմ իմ
սիրելի հօրս ու յարգելի մօրս , որոնք օրօ-
րոցէս մինչեւ այս հասակը ու եւ խնամք և
հոգածութիւն զլացած չեն ինծի եւ շատ
անքուն գիշերներ հոկած են իմ մանկական
անարիտ վերեւ որ չըլլայ թէ ես անհանգիստ
ըլլամ . ո՛հ , անսահման է մայրական գութն
ու խնամքն զոր կը տածէ իւր զաւակներուն
նկատմամբ : Արդ , քանի որ ծնողքս զիս
այսչափ սառնապանքներով մեծցուցած եւ
այս տարիքիս հասցուցած է , ինչո՞ւ ես ալ
մեծնալով չ'օգնեմ իմ սիրելի ծնողքիս ու-
րոնց գլխուն վրայ ճերմակ մազերու հետ-
քերը որոշապէս տեսնուիլ սկսած են եւ օ-
րոնք կ'ըստ ծերութեան ծանր լուծին տակ ,
դարձեալ չեն մոռնար իրենց մատաղատի
զաւակները որոնք պէտք ունին իրենց մաս-
նաւոր խնամքի ու հոգածութեան :

Եւ ես շուտ մը պիտի մեծնամ որպէս զի
օր մը կարող ըլլամ ըսելու « Հայրի՛կ, մայ-
րի՛կ, դուք այլ ես հանգստացէ՛ք ձեր բազ-
մաթիւ խոնջէնքներէն, որովհետեւ ձեր խը-
նամբովը սնուցած անձնուէր զաւակ մը ու-
նիք որ պատրաստ է ամէն բան զոհել որ
դուք հանգիստ ըլլաք: »

Ամասիա Աշակերտ Իբրանոսեան Վարժ.

Մ. ԹԻԻԹԻՆՃԵԱՆ


ԼԱԻ ԿԸ ՍԵՊԵՄ ՏՂԱՅ ՄՆԱԼ

(Մրցումի համար)

Հաստատապէս կ'ըսեմ թէ աւելի լաւ կը
սեպեմ տղայ մնալ, սակայն այս իմ ձեռքս
չէ. բայց ենթացողներ թէ մէկը ըլլար որ
կարողութիւնը ունենար մեզ տղայ վիճա-
կին մէջ թողելու կամ մարդ ընելու, ինծի
հարցնէր թէ ո՞րը կ'ուզես. ես երբէք չի
պիտի ուշանայի պատասխանելու թէ՛ «Լաւ
կը սեպեմ տղայ մնալ:» Պատճառը պարզ է,
մարդուս կենաց մէջ ամէնէն քաղցր կեանք
երթէ կայ, ա՛ն ալ տղայութեան ժամանակն
է, որովհետեւ ան ոչ հոգը ունի իր ապ-
րուստը ճարելու կամ մինչեւ իրիկուն հոգ-
նելու կամ տքնելու գործատան մէջ մարմ-
նաւոր տեսակէտով որ իր զաւակները սնու-
ցանէ հայրիկին պէս, ո՛չ ալ հրամայողներ
իւր վրայ որ ինքը աշխատութեան դրուի:
Այո՛, ունինք աշխատութիւն, բայց մեզմ
ու հանդարտիկ դպրոցական գրասեղաննե-
րու առջեւ նստած. ունինք նաեւ իրր տէր՝
մեր վարժապետները, որոնք կ'ուզեն մեր
օգուտը և ոչ թէ իրենցը, շունչ սպառելով
իրենց գիտցածները մեզի ալ հաղորդելու
համար: Նաեւ հայրիկին պէս դրամագլուխի
պէտք չունինք շահագործելու համար. մեզի
լոկ աշխատութիւն մը կը բաւէ մրցանակ-
ներ շահելու: Յիսուս ալ երբ յանդիմանա-
կան մը խօսելու սկսէր, վա՛յ ան մարդուն
... ըսելով կը խօսէր. այս կ'ապացուցանէ
թէ տղաք անկեղծ են և մեղքերէ ա-
զատ: Ահա ասոր համար կ'ուզեմ տղայ մը-
նալ. և ո՞վ արդեօք լաւ չպիտի համարէ
տղայ մնալ. կարծեմ՝ հայրիկն ալ կը փա-
փաքի տղաներու կարգը դասուիլ:

Ամասիա

Աշակ. Իբրանոսեան Վարժ.
ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՃԱՆԻԿԵԱՆ



Փ Ո Ւ Ր Ի Կ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ն

Գ Լ Ո Ւ Խ Գ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

(Շար. 7րդ քիւէն)

Եգիպտոս՝ Պարսից, Յուճաց, Հռովմայեց-
ւոն եւ Արաբաց իշխանութեան ներքեւ. —
Եգիպտոս՝ դիւրաւ նուաճուեցաւ Մեծն Ա-
ղէքսանդրէ որ իր անունով շինեց քաղաք
մը, այժմեան Աղէքսանդրիան (330): Ղա-
գոսեանք՝ այսինքն Պտղոմէոսեանք հոն իշ-
խեցին դար մը փառքով, եւ, երկու դար՝
իրենց իշխանութեան նախատինք աւելցը-
նող վատթար արարքներով, Հռովմայեցիք
անոնց տեղն անցան կղէտպատրայի մահէն
յետոյ (30 Գ. է առաջ): Թէոդոս կայսեր
հրովարտակով ջնջեցին փարաւոնական կը-
րօնքը: Մեհեանները քանդուեցան, աստ-
ուածներու արձանները խորտակուեցան եւ
աշխարհի ամենափայլուն քաղաքակրթու-
թեանց միոյն փառաւոր յիշատակարաննե-
րէն ուրիշ բան չի մնաց բայց եթէ ահեղա-
շուք փլատակներ:

Եգիպտոս՝ բռնի կերպով նետուած իր
այս քրիստոնէական վիճակին մէջ, երկու
դար ու կէս միայն մնաց: Արաբացիք 640էն
սկսեալ, ափրկելով Եգիպտոսի իրենց հետ հոն
հաստատեցին նաեւ Խալմական կրօնքը որ
դեռ կը տիրէ հոն: 13րդ դարուն Ս. Լու-
զովիկոս Թագաւորը հոն մտաւ: 19րդ դա-
րուն մէջ ալ (1869ին) Ֆրանսացիք Սուէզի
ջրանցքը բացին նշանաւոր Պ. Ֆերտինան
տը Լէսէբսի ձեռքով՝ աշխարհի վաճառակա-
նութեան առջեւ, իրակացնելով այդպէս 35
դարերէ հետէ մեռած Փարաւոնի մը մտա-
ծումը:

Եգիպտոսի կրօնքը, կառավարութիւնը եւ
արուեստները. — Եգիպտոսի մէջ՝ կերպով մը
երկու տեսակ կրօնք կային. մէկը Ժողովուր-
դինը, միւսը՝ քուրմերունը: Առաջինները
իրբեւ աստուածային էակներ համարեցին
Իպիս (օձաձուկ թռչունը), կոկորդիլոսը,

գետածին, կատուն, Ապիս ցուլը, զոր կը դաւանին « փայլակէ մը նետուած » : Երկրորդը կը բացատրէր չարն ու բարին, երկու սկզբունքներու միմեանց հետ ունեցած ներհակութեամբ : Օսիրիս կը ներկայացնէ, բարերար ազդեցութիւնները, եւ Տիւփոն գիշերուան ու գէշ օրերու աստուածը : Այնպէս կը թուի թէ նախ միակ Աստուծոյ մը հաւատքը Եգիպտացւոց կրօնքին հիմն եղած է : Մեռելոց դիակներն ալ պահելու, պահպանելու համար տարուած հոգն ու խնամքն ալ կ'ապացուցանեն թէ Եգիպտացիք կը հաւատային ապագայ կեանքի մը եւ նոյն իսկ դամբանական արձանագրութեանց նայելով՝

տիտղոսը՝ ինչպէս նաեւ Հնդկական ընկերակազմութեան պէս Գասգեր (պաւստանայնորէ-եալ դասակարգ) չունէին Եգիպտացիք, բայց ունէին ինչ ինչ հասարակաց դասակարգեր, իւր զաւակը՝ որդի ի հօրէ ժառանգած արհեստին կամ կայութեան մէջ կը մնար : Սուտ երգումը մահուամբ կը պատժուէր. կը կտրէին մատնիչին լեզուն՝ եթէ թշնամուոյն յայտնէր կամ մատնէր Պետութեան գաղտնիքները : Դրամանենդերուն երկու ձեռքերը կը կտրէին : Ո՛ր եւ է հաշուոյ մէջ շահերն երբէք զրամագլուխէն աւելի ըլլալու չէին : Եգիպտացի մը կրնար փոխառութիւն ընել իր հօրը մոմիան դրաւ դնելով : Եթէ չի վը-



Պետոպոլիսի մեհեանքներ

վերածնութիւններու, որոնք կը յիշեցնեն Հնդիկներու հոգեփոխութիւնը : Բայց աստուածային երրակի (Հնդկական Դրիմուրդիին երրորդութեան, պէս) յղացումը. Օսիրիս կամ արեւը, համայն բնութեան սկիզբը. Իսիս կամ Բնութիւնը, Հօրու անոնց աստուածային զաւակը, կը մթագնէ բացարձակ էակին՝ գաղափարը եւ Եգիպտացիները բազմաստուածեան կը զաւածնցնէ : Թագաւորները այնքան աւելի իշխանական հեղինակութիւն ունէին որ՝ հասարակաց հաւատալիքներու մէջ « Արեւու դաւակ » էին, եւ կրօնքին պէտք ըլլալու այս

ճարէր այդ պարտքը, ընսանեկան թաղումի պատուէն կը պրկուէր : « Եգիպտոսը՝ կ'ըսէ Պոսիւէ, ամենայն բարւոք վարչութեանց աղբիւր էր » :

Եգիպտացիները յաջողապէս մշակեցին մեքենագիտութիւնը, երկրաչափութիւնը, աստեղագիտութիւնը. անոնք հնարեցին մեհենական սրբադրոշմ գիրը, որուն ամէն մէկ տառերը առարկաներու խորհրդանիշ պատկերներ ըլլալով, ամբողջացած ձայնական նշաններով, որոնք այլ եւս միմիայն ձայներ կը ներկայացնեն : Նկարչութեան մէջ գործածեցին այժմեան կենդանի գոյներ, զորս

ժամանանակը կարողած չէր ջնջել, իրենց արձաններէն մի քանին յոյժ գեղեցիկ են, եւ իրենց ճարտարապետութիւնը անհաւասարելի է հոյակապ ու շքեղ ասեքին կողմանէ : Վկայ են թէքէի մեհեանները եւ Գարնակի ստորերկրեայ սիւնապատ դահլիճներուն սրահը, ուր կամարը ձգուած է 134 սիւներու վրայ, որոց շատերը 21 մէթր բարձր եւ 3,57 տրամագիծ ունին. վկայ են

նաեւ բուրգերը, տեսակ մը վիմեղէն լեռներ, յաղթական կամարները, ստորերկրեայ դամբարանները, լաբլարինթոսը, Մէրիսեան լիճը, թումրերը, ջրանցքները, Նեղոսի ջուրերը սահմանափակելու եւ ուղղելու համար : Ո՛չ մի ժողովուրդ հնութեան մէջ այնչափ իրար չանցուց հողն ու կրանիգը :

(Շարունակելի)



Պ. Ֆերսինան քր Լեւեփս (Սիւեթի ջրանցքը բացող)

ՃՕՆ ՀՕՔՔԻՆՍ

Պատմելիքս 15րդ դարու վերջերը տեղի ունեցած է :

Ճօն Հօրքինս, աղքատիկ դերձակ մը, Լոնտոնի ամէնէն նեղ ու աղտոտ փողոցին մէկ անկիւնը խարխլած կրպակի մը պատուհանին առջեւ նստած, կտոր մը լաթ առեր կը կտրէր ու կտրէր : Ըրածը ցոյցի համար բան մըն էր, որովհետեւ խեղճը բնաւ բանելիք գործ չունէր :

« Փողոցէն անցնողները աշխատիլս տեսնելով պիտի կարծեն թէ շատ գործ ունիմ. իրենք ալ կարկտիկիք բան մը եթէ ունենան ինծի կը բերեն : Հիմակուհիմա քանի մը կոճակ փակցնելու ալ տան, նորէն շնորհակալ կ'ըլլամ : Առտուրնէ ի վեր բերանս բան չեմ գրեր : առանց գործի հալեցայ մաշեցայ, կունակս ճրագ մը եթէ բռնեն կուրծքէս լոյսը կ'երեւայ » :

Հինգ վեց երիտասարդներ փողոցին ծայրը հասան. հաստ ու խոշոր վերարկուներու

մէջ փաթթուած էին որոց տակէն սուրի ծայրը կ'երեւէր :

« Ի՞նչ ուրախ եմ կ'ըսէր խեղճ դերձակը : Փորերնին կուշտ, կռնակնին տաք, գրպաննին լեցուն է ոսկիով : Ա՛խ, ասոնցմէ մէկուն վերարկուն եթէ կարկաէի, բազում շինած կ'ըլլայի » :

Եւ նախանձոտ աչքով անոնց կը նայէր : Երիտասարդներէն մին նշմարեց զինքը :

— Սա թշուառականը նոյեցէք, ըսաւ ընկերներուն, ելեր Ծնունդի գիշերով գործ կը բանի : Եկէ՛ք խանութը բռնկցնենք :

— Հարրի բարեկամ, Ծնունդը կէս գիշերին կ'սկսի. ըսել է մարդուկը իրաւունք ունի հիմա աշխատելու : Մանաւանդ հօրս մէկ տունը այդ խանութին վրայ շինուած է, եթէ մին այրենք միւսն ալ կը լմնայ :

— Զէյմս իրաւունք ունի, ըսաւ զուարթ դէմքով նիհար երիտասարդ մը, ձգեցէ՛ք քիչ մը չարչրկեմ սա մարդուկը :

Երիտասարդները սկսան խնդալ :

— Թօմ ձօէ, Թօմ ձօէ, ըսաւ Հարրի, մի խենդեցներ խեղճը, ողջ ողջ այրենք աւելի լաւ է :

Խումբը խանութին մօտեցեր էր : Ծօն Հօրքինս հասկցաւ որ զինքը կը ծաղրեն, բայց յաճախորդ մը շահելու յուսով չտեսնելու զարկաւ : Յանկարծ դրան արուած ուժգին հարուածէ մը ցնցուեցաւ :

— Նե՞րսն ես, աստանային դերձակը, կ'ըսէր հաստ ձայն մը :

— Թեթեւութիւններէն մին է, միմուաց դերձակը, աթուէն վար ցատքեց եւ գնաց դուռը բացաւ : Բայց ներս մտնողին դէմքը տեսնելով սոսկումէն ետ քաշուեցաւ :

Գաճաճ մը, հաստ ու կլոր, խոշոր դեղին մօրուքով ծածկուած դէմքով դիմացը կեցեր կ'օրօրուէր : Թեւին վրայ չորս ծալլուած կտաւ մը բռներ էր : Մէջքէն կապած սուրը հասակին կրկինը կ'ըլլար :

— Վարպե՞ա ես, հարցուց :

— Ես իմ գովեստս չեմ ըներ, պատասխանեց դերձակը, բայց կը տեսնէք որ յաճախորդէ գլուխ առած չունիմ, ամէնքը վրաս կը վազեն կարուելիք բան մը ունենալնուն պէս :

— Աղէ՛կ, մինչեւ աստուան եկեղեցիի զանգակը զարնուիլը կրնա՞ս ինծի վերարկու մը կարել :

Եւ ձեռքինը դերձակին երեսն նետեց : Խեղճին գործը չէր ասանկ յաճախորդի մը հետ գլուխ ելլել, բայց ի՞նչ ընէր, փորը անօթի էր :

— Կրնամ հասցնել, պատասխանեց :

— Անանկ է նէ չափս առ :

Ծօն անգամ մը պատուհանը նայեցաւ. առաջուան երիտասարդները հոն էին, բայց հիմա լուրջ կերպարանքով մը կ'սպասէին : « Հը՛մ. ըսաւ ինքնիրեն, աս գաճաճէն կը վախնան կսր » : Եթէ խեղճը շփոթած չըլլար պիտի տեսնէր որ ամբողջ փողոցը լեցուեր էր բազմութիւնով մը : Բուրդէ թել մը առաւ, մարդուկին վիզէն մինչեւ ծունգերը չափեց :

— Վեց մատ, ըսաւ :

— Վե՛ց մատ, գոչեց պզտիկ մարդը, թշուառական քեզ, կատակի՞ ելեր ես :

— Բայց...

— Սխալեր ես կ'ըսեմ քեզ, նորէն չափէ : Դերձակը նորէն սկսաւ :

— Իրաւ է եղեր, երեք մատ պակաս չափեր եմ, ինը մատ է ճիշդը :

— Նորէն չափէ :

— Վեց մատ, առաջ աղէկ ըսեր էի :

Գաճաճին դայրոյիլը բռնեց, սուրը կէս մը քաշելով, « Սրիկա՛յ, դուրսի ստահակները ղուարձացնե՛լ կ'ուզես, հետս իյնալով : Կեցիր, ասա՛յ քեզի պատժեմ, յետոյ անոնց ալ չափը կուտամ » և ուրը քաշելով խեղճին վրայ քալեց : Դերձակը վախէն սեղանին ետին փախաւ : Բայց տեսաւ որ հոն չատ ապահով տեղ մը չէ, աչքովը փախչելու ծակ մը կը փնտռէր, յանկարծ միտքէն ուրիշ բան մը անցաւ : Անվախ կերպով մը գաճաճին դէմը եկաւ ու խրոխտ ձայնով մը ըսաւ :

— Զեր բարձրութիւնը ուզածին չափ թող բարկանայ, ոտքերը գետինը՝ պատե՛րուն վարնէ. աչքերը անդին ասդին դարձնէ. ի՛նչ որ ալ ընէ նորէն այդ ձգլած վիճակէն չափտի ազատի :

Գաճաճը սուրը տեղը դրաւ և ծաղրածու ձայնով մը հարցուց :

— Ըսածիդ վստա՞հ ես :

— Այո՛ :

— Աղէ՛կ, նորէն հասակս չափէ :

Ծօն անգամ մը սկսեր էր, չէր կրնար կէս ճամբան կանգ առնել. չուտ մը նորէն

կծիկը առաւ ու չափեց: Խենդենալը բան մը չէր. գաճաճը մեծցեր էր:

— Տասներկու մատ, ըսաւ:

— Չափէ՛:

— Տասներկու մատ:

— Նորէն չափէ:

Առաջուան գաճաճը սրունքներուն վրայ դարմանալի կերպով մը կ'օրօրուէր, և քանի օրօրուէր այնքան հասակը կ'երկնար: Շուտով դերձակին հասակէն վեր ելաւ, երբ խեղճը հարցուց իրեն.

— Մտած ատեննիկ «սատանային դերձակը» ըսիք ինծի, արդեօք դուք սատանա՞ն էք:

— Շնորհակալ եմ ձեր գօմբլիմանէն, նորէն չափէ՛:

— Տասներկու մատ:

Գաճաճը հսկայ մը եղեր էր, դերձակին հասակէն շատ բարձր:

— Կրնա՞ս այդչափ կտաւով ինծի վերարկու մը ձեւել:

— Ձեմ գիտեր, միմեաց դերձակը, մէյ մը կտաւին, անգամ մըն ալ ցեղունին նաշելով՝ ուր հասած էր յաճախորդին գլուխը:

— Ուրեմն ալ չմեծնա՞մ,

— Անշուշտ:

Օրօրումը նորէն սկսաւ, հսկան սովորական մարդու հասակ մը առաւ:

Դերձակին խենդենալուն բան չէր մնացեր: Խեղճին շունչը բռնուեր էր. սոսկալի երազէ մը արթնցողի պէս աչքերը կը շըփէր և չորս դին կը նայէր թէ արդեօք իրա՞ն սատանային հետ է գործը: Բայց որչափ ալ ըլլայ մարդուկը անթի չէր և եկողը, սատանայ կամ արարած՝ յաճախորդ մըն էր:

— Կէս գիշերին կուգամ, ըսաւ օտարականը, և սեղանին վրայ ոսկի մը նետելով աներեւոյթ եղաւ: «Օրհնեալ ըլլաս, ո՛վ դրամ, գոչեց, ի՞նչ հոգս ու թողքէն կամարքայութենէն գալդ. կը բաւէ որ նոր ոյժ մը պիտի առնեմ քեզմով»:

Հազիւ թէ դուռը գոցուեցաւ օտարականին վրայէն, ահա նորէն բացուեցաւ, այս անգամ ամբոխն էր որ ներս կը խուժէր:

— Ո՞ւր գնաց գաճաճը:

— Իրա՞ն սատանան էր:

— Եղջիւրները ի՞նչպէս էին:

— Աստուածնիդ սիրէք գործերնուդ գացէք, դուք ալ տեսաք դուրս ելլողը:

— Դուրս ելլողը սիրուն մարդ մըն էր, առանց մօրուքի, բայց գաճաճը ո՞ւր գնաց:

Յարմար պատասխան մը տալով ամէնքը մէկէն ճամբելէն աղէկը չկար:

— Վառարանին մէջէն վեր ելաւ, ըսաւ ձօն, այրելու վախը չունէր ապիրատը:

— Անոր համար պիտի աշխատիք հիմա, վարպետ ձօն:

— Այս կտաւը դժողք կը հոտի կոր:

— Կ'ուզէ նէ վարդ թող հոտի, ա՛լ այսչափը կը բաւէ, հիմա խանութէն դուրս ելէք որ ես ալ երթամ ճաշ ընեմ:

Շուտ մը գնաց մօտի ճաշարանը, փոքր կշապցուց և ետ դառնալով լամբարը վառեց ու սկսաւ գործի:

— Սատանան որչափ չարաճճի է, կ'ըսէր ինքնիրեն, դերձակը անկէց ա՛լ աւելի չարաճճի կ'ըլլայ: Պարոն սաղայէլ, ինծի չփոթեցնել ուղեցիր, բայց ես անանկ հագուստ մը շինեմ որ ամէն հասակիդ ալ կարենաս յարմարցնել: Քեզ նայիմ, ձօն Հօբքինս, եթէ եկողը իրաւ սատանան էր, իրեն վարպետը պիտի գտնայ:

Եւ անգագար կը կտրէր ու կը կարէր, կարծես թէ տասը մատները մէյմէկ ձեռք եղած ըլլային: Ամբողջ վերարկուին մէջ՝ վերէն վար լայնքին կտրուած ճեղքեր բացաւ, ճիշդ թուղթէ լապտերի մը պէս:

Գիշերը՝ եկեղեցիին գանգակին առաջին հարուածը թնդալ սկսեր էր, երբ խումբ մը երիտասարդներ (առջի իրիկուանները) խանութէն ներս մտան:

— Ո՞ւր է վերարկուս, ըսաւ անոնցմէ մին:

— Տէր իմ, կարածս ձեզի համար չէ:

— Իրա՞ն կ'ըսես, յարեց նոյն տղան, ձայնը ճիշդ գաճաճին նմանցնելով:

Ձօն դողաց. «Ի՛ր ձայնն է, բայց ինքը ո՞ւր է» կը կրկնէր խեղճ դերձակը:

Թօմ ձօն — գաճաճը ինքն էր — մէկ ոտքին վրայ դարձաւ, օրօրուեցաւ ու դերձակին ձեռքէն բռնելով հարցուց:

— Ճանչցա՞ր հիմա ինծի:

Ճիշդ առաջուան գաճաճն էր, դեղին մօրուքովը:

— Այո՛, դուք էք, ահա ձեր վերարկուն:

Երիտասարդները սկսան դիտել ու բա-
նանջացումի աղաղակներ հանել: Ճէյմս
հագուստը իրեն իշխելով լամբարին լոյսին
բռնեց:

— Ինծի ծախէ, Թոմ ձօն, վրայիս շատ
լաւ պիտի յարմարի:

— Թոմ ձօն, գոչեց դերձակը ապշած,
իշխանին նշանաւոր կատակերգակը. հիմա
խեղճ վրայ եկաւ: Տէր իմ, դուք ամէն
հասակ կ'առնէք, լաւ, վերարկուն ալ ձեր
ամէն հասակին կը յարմարի: Եթէ պզտիկե-
նաք, ձեռքերը իրարու վրայ գոցուելով վե-
րարկուն կը պզտիկնայ. եթէ մեծնաք,
ծալքերը կը բացուին և հագուստն իդ նորէն
յարմար կուգայ ձեզի:

Ձօն Հօբքինս մեր գաւառ ըսածը հնարած
էր: Թոմ ձօն վերարկուն փորձեց թէ գա-
ճածին և թէ հսկայի հասակին կը յարմարէր:

— Սառանան, ըսաւ, ես չեմ, ձօն Հօբ-
քինսն է:

— Սա ալ ասանկ վերարկու մը կ'ուզեմ.
ըսաւ ձէյմս:

— Ես ալ կ'ուզեմ, կրկնեց Հարրի:

Եւ ամէնն ալ իրենց քսակները դերձա-
կին սեղանին վրայ նետեցին:

— Խանութը պզտիկ է մեզի համար, ը-
սաւ Հարրի, բայց Ծնունդէն վերջը կը կար-
գադրենք:

Ձօն ուրախութենէն կուլար, « Տէր իմ,
ըսաւ Թոմ ձօնի դառնալով, խանութս ե-
կողը սատանան չէր, հասկա Աստուած էր:

Աւելորդ է ըսել թէ Ձօն Հօբքինս Լոնտո-
նի ամէնէն հարուստ դերձակը եղաւ, ո-
րովհետեւ երիտասարդներուն Հարրի ըն-
կերը՝ Հենրիկոս Է. ն էր:



ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԵՂԵՐ

ՃԱԲՈՆԵԱՆ ՑԵՂ

Ճարոնի մէջ, որ կը բաղկանայ Նիթօն
մեծ կղզիէն և Արեւելեան Ասիոյ խումբ մը
փոքրիկ երկիրներէ, կը բնակին հանճարեղ
և իմաստուն ժողովուրդ մը: Եթէ Ճարոնցի
շատ մասամբ Չինացւոյն կը նմանի, ուրիշ
մասամբ ալ շատ կը հեռանայ Երկնային
կայսրութեան բնակիչներէն և բարոյականի

նկատմամբ ալ խիստ կը գերազանցէ զա-
նոնք:

Ճարոնի և Չինաստանի մէջ գիւրերը մի-
եւնոյնն են, վասն զի Ճարոնեան գրական-
նութիւնն ազգային չէ, այլ բոլորովին Չի-
նական:

Ճարոնի մէջ, ինչպէս ի Չինաստան,
Պոետայական և Քօնֆիչիուսի կրօնքը կը
պաշտեն: Այն մեհեանները որոնց մէջ այս
կրօնքները կը պաշտուին, Չինացւոց մեհ-
եաններուն նմանն են: Ասոնց մէջ կը ծա-
ռայեն միւլնոյն քուրմերը, դերձուած գը-
լուխներով և գորշադոյն երկայն հագուս-
տով: Երկու երկիրներու մէջ ալ նաւերը և
նաւակները միւլնոյնն են: Ասոնց կերա-
կուրն ալ միւլնոյնն է, այսինքն բաջարե-
ղէններ, բրինձ, ձուկ թէյի և օղիի հետ
մեկտեղ: Հնդկի ծառաները, իրենց բեռերը
կը կրեն Ճարոնի, ինչպէս նաև Չինաստանի
մէջ, նանկազաքի՝ ինչպէս նաև Բէքինի
մէջ, փողոցներն միւլնոյն սուր կանտնեալ
ճիւղերով թնդացնելով: Ճարոնցի կիները կը
ծածկուին այնպէս, ինչպէս կը ծածկուէին
Բէքիի Չինացի կանայք քղանցքի գործա-
ծութենէն առաջ, և քաղաքաց բնակիչներն
Նէտոյի, ինչպէս նաև Նանքինի մէջ, իրենց
տուներուն մէջ կը փակուին, ցուրտին կամ
տաքին դէմ պատապարուելու համար:

Բայց ահա հոս կը դադրին նմանութիւն-
ները: Ճարոնեան ցեղը, որ բոլորովին զին-
ուորական աստական ազգ մըն է, կը
զայրանայ երբ շփոթուի Երկնային կայս-
րութեան խոնարհ և խորամանկ ցեղին հետ՝
որ պատերազմը կ'արհամարհէ և միայն վա-
ճառականութեան համար կ'ապրի: Չինացին
կ'սկսի խնդալ երբ ո՛ր և է թշնամույ մը առ-
ջեւէն խոյս տուած ըլլալուն համար զինքն
յանդիմանեն, կամ երբ իրեն սուտ մը խօ-
սած ըլլալը ապացուցանեն, ասոնք անոր հա-
մար անտարբեր բաներ են: Ճարոնցին,
կեանքն ու պատիւը ուրիշ բան կը հասկը-
նայ, և պատերազմիկ ու զոռոզ է: Ճարոն-
ցի զինուոր մը թշնամույն լաւ կը դիմադրէ:
Իրմէ սուրն առնել, զինքն անպատուել է,
այդ սուրը երբ վերստին ձեռք առնու,
պէտք է որ թշնամույն արեամբը ներկուած
ըլլայ: Մենամարտութիւնը, զոր Չինացիք
չեն գիտեր, սոսկալի կերպով ի գործ կը
դրուի Ճարոնի մէջ Նիթօնի բնակիչը, իր

փոքր սուրբ հարուածով մը կը բանայ և իր հակառակորդին հրաւիր կը կարգայ այնպէս ընել: Չինական ցեղը, զգուշի եւ մշտաւ աղտեղութեան մէջ կ'ապրի, ընդհակառակն բոլոր ճարօնցիք, առանց աստիճանի կամ հարստութեան բացառութեան, ամէն երկու օրը անգամ մը բաղնիք կ'երթան: Ճարօնցին որ զուարթ եւ հաճարձակ է և նշանաւոր իմաստութիւն մը ունի, անյազապէս կ'ուզէ գիտնալ ինչ որ դուրսը տեղի կ'ունենայ եւ կ'ուզէ սորվիլ: Չինացին ընդհակառակն, խստութեամբ իր հոյակապ պատին ետեւը կը փակուի եւ ամէն օտար բան յետս կը մղէ, բոլոր ասոնք կ'ապացուցանեն թէ ճարօնցիք, Չինացիներէն շատ վեր ցեղ մ'են:

Բնական պատկերով, ճարօնցիք Չինացիներէն կը տարբերին մի քանի հանգամանքներով, որք կը նշմարուին մասնաւորապէս ծովեզերեայ բնակչաց, որոտրդաց եւ նաւաստեաց վրայ:

Այս վերջինները փոքրիկ, կայտաւ, զօրեղ, ցցուած ծնօտներով, խոշոր յիշունքներով, փոքրիկ, ճնշուած արմատով, բայց կողմնապէս կոր քիթով մարդեր են: Իրենց մազերը գանգրածեւ ըլլալով՝ յարմարութիւնն ունին:

Ճարօնցիք, ընդհանրապէս միջնահասակ են, քիչ մը ուսերնուն մէջ միտուած մեծ գլուխ մը, լայն կուրծք մը, երկայն կիսամարմին մը, մսուտ ազդեր, նուրբ և կարծ սրունքներ, փոքրիկ ոտքեր եւ բարակ ձեռքեր ունին: Խիստ խոր ճակատ և մասնաւորապէս լայն ու ցցուեալ ալուր ունեցող մարդոց գլուխը, դիմացի կողմէն դիտելով, յունակերպութենէ աւելի երկրաչափական տրապէզի ձեւ ունի, եւրօպացիներէն աւելի դուրս կարկառուած եւ քիչ մը նեղ աչքեր ունին: Ասոնք չինական կամ մանկօրեան տիպարին արգիւնքը չեն: Ճարօնցիներուն գլուխը աւելի մեծ է, գէմքը աւելի կանոնաւոր, քիթը աւելի ցցուած եւ լաւ յօրինուած են:

Ամբողջ փողովուրդեան մազը յղկեալ, թանձր եւ եպենոսի նման սեւ է: Անոնց մօրուքը բաւական խիտ է: Մորթի գոյնը ընկերական աստիճանի համեմատ կը զանազանի, հարաւային Եւրոպայի բնակչաց, անբեականէզ կամ անփայլ ճերմակ եղող մասէն

սկսելով մինչեւ ճաւայի թխագոյն եւ մոխրագոյն բնակիչները: Տիրող գոյնը թուածիթագոյն է, որ երբեք չի նմանիր Չինացեաց գեղին գոյնին: Կանանց գոյնը արանց գոյնէն աւելի փայլուն է, բարձր ընկերութեանց եւ միջեւ իսկ գիւղացեաց մէջ այնպիսի կիներ կան, որոնց գոյնը բոլորովին ճերմակ է:

Երկու անջինջ յատկոթիւններ: Ճարօնցին եւրոպական տիպարէն կը բաժնեն: Ասոնք են՝ նեղ աչքեր եւ կուրծքի անշնորհ ճնշումը, որ կը նշմարուի ծաղկահասակ անձանց, մինչեւ իսկ ամենէն գեղեցիկներուն վրայ:

Այր եւ կին, սեւ աչքեր, ճերմակ եւ առողջ ակուայներ ունին: Անոնց գէմքը՝ յոգեղու է եւ զանազան տեսակ սրտայայտումներ կը ներկայացնեն: Սովորութիւնը կը պահանջէ որ ամուսնացեալ կանայք իրենց ակունքները սեւցնեն:

Ճարօնցեաց ազգային հագուստը, բաց տեսակ մը պատմութեան է, զոր քիչ մը աւելի լայն եւ աւելի յարդարեալ կը շինեն կանանց համար քան թէ տղանց: Սոյն պատմութեանը մարմնոյն վրայ խաչաձեւ կը գոցեն այնպիսի գօտիով մը, որ արանց համար միտաբանեայ նեղ կամար մը եւ կանանց համար տարօրինակ կերպով թիկունքին ետեւը կապուած լայն կերպասի կտոր մ'է:

Ճարօնցիք ճերմակեղէն չեն հագնիր, բայց ինչպէս ըսինք, ամէն երկու օրը անգամ մը կը լուացուին: Կանայք կարծիք մեծաքանակ չղարէ չապիկ մը կը դործածեն:

Անոնք աստեղ գիւղացիները, ձկնորսները, արհեստաւորները, հնգիկ ծառայները, իրենց աշխատութեանը կը պարապին գրեթէ կատարեալ մերկ վիճակի մը մէջ և կանայք իրենց մէջքէն պարեգօտ մը միայն կը կտան: Անձրեւի ժամանակ յարգէ կամ իւղով օծուած թուղթէ վերարկուներով եւ հնգիկեղէնի կեղեւէ շինուած՝ վահանի ձեւով գլխարկներով կը ծածկուին: Չմեռք, արք իրենց հագուստին տակէն, մինչեւ ծունկերը հասնող գրատ (սէթրի) մը եւ կապուտակ բամպակէ անդրաւարտիք մը և կանայք մէկ կամ շատ մը բամպակով լեցուած վերարկուներ կը հագնին: Գեղջկական դասուն վերարկերեալ անձինք, երբեք առանց գրատի դուրս չեն ելլեր:

Սովորաբար անոնց հազուատները, կերպարին տեսակէն միայն իրարմէ կը սալութերի: Ազնուականները, միայն մետաքս հագնելու իրաւունք ունին, որոնք արքունիքը դաջած եւ մեծ այցելութիւններ աւելած ատենին, չքեղապէս կը հագուին: Ամէն ոք կտաւէ զանկապաններ եւ յարդէ հիւսուած տրեխներ (չարք) կամ լարով կապուած փայտէ կօշիկներ կը դարձածէ: Ամէն մարդ իր տունը մտած եւ կամ օտար տուն մը դաջած ժամանակ իր զանկապանները կը հանէ եւ զանոնք սեմին վրայ կը թողու:

Ճարօնեան տուններուն առիտակամներն փոխաթնորով ծածկուած են, որոնք ուրիշ ամէն կարասեաց տեղ կը բռնեն:

Ճարօնցին մէկ կնոջ մը միայն ամուսին է:

Այս ժողովուրդը գիտութեանց եւ արուեստից համար ճաշակ ունի: Կը սիրէ երաժշտութիւնը, թատրոնները եւ խիստ առաջ տարած է ձեռակերտ արուեստը: Կեղեցիկ կերպաններ կը շինէ, ճարտարութեամբ երկաթին ու պղնձին վրայ կ'աշխատի, հիւանալի սուրեր կը դարձնէ եւ իր փայտէ գործերը, ջնարակները, յախճապակիները մեծ համբաւ ստացած են:

(Շարունակելի)

Ա. Մ.



Դ Ի Տ Ա Ն Ա Ն Վ Է Պ

Փ Խ Խ Ա Վ Ե Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՐԸ

— — —

(Շարունակութիւն Տրդ քիւն)

— Աքսէլ, ըստ հօրեղբայրս, գործին ամէնէն դժուար մասը կատարուած է:

— Ինչո՞ւ համար էն դժուարը մնացած է:

— Հապա անանկ չէ՞. ասկէ ետքը միանակ վար պիտի իջնանք:

— Այդ մասին իրաւունք ունիք. բայց իջնալէն վերջը ելլելն ալ կայ:

— Ատիկա բնաւ հոգս չեմ ընել: Հիմա-

կուհիմայ ես գրատուն պիտի երթամ, նա-յիմ թէ Սաքնիւսէմի ձեռագիրներէն բան մը կա՞յ մնացած:

— Ես ալ կ'երթամ քաղաքը կը պտըտիմ, դուք չէ՞ք ուզեր անդամ մը տեսնել:

— Ո՛չ, Խալանտայի մէջ զիս շահագրգռող բանը հողին տակը կը գտնուի եւ ո՛չ թէ վրան:

Դուրս ելայ ու սկսայ անդին ասդին պտըտելի: ՌէյքեաՎիքի փողոցներուն մէջ մարդ դուրս չկորսուիր, որովհետեւ քաղաքը շատ պզտիկ բան մըն էր: Բիչ մը ծովեզերք իջայ, հին ոճով հրաբուխէ ելած քարերով շինուած եկեղեցին դիտեցի, քառասուն աշակերտ պարունակող Համալսարանին առջեւէն անցայ եւ երեք ժամ ետքը ա՛լ տեսնելու բան չէր մնացեր:

Քաղաքը շինուած էր երկու բլուրներու մէջտեղ. որոց մին դէպի ծով կ'երկարի՝ իրեն դադաթ ունենալով Սնէֆէլսը, իսկ միւսը կապուած է լափայի ահագին քանակութեամբ մը. որ ցամաքին կողմէն ահագին պատնէշ մը կը ձեւացնէ: Շրջակայները առին կողմ հրաբխային ժայռեր դուրս ցըցուած էին. բոսարերով լիւնը շատ խեղճ էր, եւ հազիւ թէ բռնած խոտը կենդանիներուն կը բաւէր:

Անցորդները շատ ցանցառ էին, ամէն մարդ շուկան գացեր էր մօրիւ ձուկերը չորցնելու, որոնք կլլիին մեծ հարստութիւնը կը կազմէին: Բնակիչները չարքաշ մարդեր էին, քիչ մը գերման ցեղին նման կապոյտ աչքերով: Ասոնք բնաւ չէին յապտեր, ծանր կերպով խնդումք մը ունէին, բայց բնաւ ժպտելնին չտեսայ: Հագուստին կը բաղկանար սեւ բուրդէ վերարկուէ մը եւ կարմիր եզերքներով անդրազարդէ մը, կօշիկնին կաշիի մը կտորէ ձեւացած էր զոր չուանով սրունքնուն կը փաթթէին:

Ամէն բան աղէկ մը աչքէ անցնելէ ետքը Պ. Ֆրիտրիքսընի տունը դարձայ: Հօրեղբայրս ալ եկեր էր:

Փ.

Երբ ճաշի իջանք Լիուէնսլորք դասախօսը ութը օր ծով բռնողի մը պէս սկսաւ տնյադութեամբ ուտել: Սոսակցութիւնը, ինչպէս յայտնի է գիտական նիւթերու վրայ կը

դառնալով Ամեն մէկ խօսելուս, հօրեղբայրս աչք կ'ընէր որ մեր ապագայ ծրագիրներու վերաբերեալ խօսք մը բերնէս չի փախցընեմ:

Պ. Ֆրիտրիքսըն՝ դասախօսին հարցուց թէ դրատան մէջ փնտռածը գտա՞ւ արդեօք:

— Ձեր դրատանը մէջ պարապ դարակներէ զատ բան չկայ:

— Ինչո՞ւ. ութը հազար կոոր գիրքէն աւելի կայ հոն. թէ՛ հին սկանտինաւեան լեզուին վերաբերեալ թանկագին մագաղաթներ եւ թէ՛ Բոքէնհայէն գրկուած միշտ թարմ գրական արտագրութիւններով լեցուն է:

— Ո՞ւր տեղը ութը հազար գիրք կար:

— Պարտն Լիտէնպրօք, ամեն ալ ժողովուրդին կուտանք որ կարդան: Իսլանտայի մէջ չկայ խեղճուկ գիւղացի մը որ կարդալ չգիտնայ. ընթերցանութեան ճաշակը հոս շատ տարածուած է: Ի՞նչ կրնանք ընել, գիրքերը դարակներուն ետին փոշոտելուն տեղ, աւելի լաւ է որ ժողովուրդին ձեռքը պտտելով պատըռտին: Արդէն 1816ին դրատան ընկերութիւն մը հաստատեցինք, որու նպատակն է ժողովուրդին ընթերցանութեան յարմար գիրքեր հրատարակել: Եւրոպացի շատ գիտուններ մեզի պատուեցին անդամակցելով այս ընկերութեան, եթէ դուք ալ կը բարեհաճիք մեր թղթակից անդամներէն մին ըլլալու շնորհն ընել, երախտապարտ կ'ըլլանք ձեզ:

Հօրեղբայրս, որ արդէն քանի մը հարիւր կաճառներու անդամ էր. սիրով ընդունեց այս պատիւը:

— Ի՞նչ գիրք կը փնտռէիք եւ չգտաք հարցուց Պ. Ֆրիտրիքսըն:

Հօրեղբայրս պահ մը վարանեցաւ, որովհետեւ ճիշդ խնդիրին զպելիք կ'ախին հասեր էր:

— Պ. Ֆրիտրիքսըն, ըսաւ, կ'ուզէի գիտնալ թէ հին ձեռագիրներուն մէջ Առն Սաքնիւսէմիները կ'ան:

— Առն Սաքնիւսէ՛մ, պատասխանեց, Ռէյքեափիլի դասախօսը: Տասնըվեցերորդ դարուն ապրող այն մեծ գիտունը ըսել կ'ուզէք որ մեծ ալշիմիստ մը եւ մեծ ճամբորդ մըն էր միանգամայն:

— Ճիշդ այդ է:

— Իսլանտայի գրական ու գիտական փառքերէն մին:

— Այո՛, այդ է:

— Որու յանդգնութիւնը՝ իր հանճարին կը հաւատարէր:

— Կը նայիմ որ աղէկ կը ճանչնաք:

Հօրեղբայրս ուրախութեան մէջ կը լողար՝ իր գիւցագին միայն ասանկ խօսուիլը իմանալով. խնդումէն, Պ. Ֆրիտրիքսընը ուտելը կուգար:

— Իր գրուածքներէն բան մը չունինք,

— Ի՞նչ, Իսլանտայի մէջ...

— Ո՛չ Իսլանտայի մէջ կրնաք գտնել. ո՛չ ալ ուրիշ տեղ. որովհետեւ Սաքնիւսէմ 1573ին հալածուեցաւ իբր անհաւատ, իր գրուածները այրեցին հրապարակաւ Բոքենհայի մէջ:

— Աղէկ, հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ համար Սաքնիւսէմ իր գործերուն դատապարտուիլը տեսնելով՝ ծածկագրութեան դիմեր է պահելու համար զաղտնիք մը:

— Ի՞նչ գաղտնիք հարցուց Պ. Ֆրիտրիքսըն, ուժգին:

— Գաղտնիք մը... որ, կամպագեց հօրեղբայրս:

— Արդեօք պահուած մագաղաթ մը ունի՞ք:

— Ո՛չ, պարզ էնթադրութիւն մը կ'ընէի:

— Աղէկ, ըսաւ Պ. Ֆրիտրիքսըն, որ ա՛լ չպնդելու ազնուութիւնը ունեցաւ: Կարծեմ թէ մեր կղզիին հանքային հարստութիւնները տեսնելու պիտի ելլէք:

— Անշուշտ, պատասխանեց հօրեղբայրս, բայց քիչ մը ուշ կուգամ. ինէ առաջ շատ գիտուններ անցան հոսկէ:

— Այո՛, Պ. Լիտէնպրօք, շատեր աշխատեցան Իսլանտան քննելու, ինչպէս Պարոնայք Օլաֆսէն եւ Բօլէլսըն, Թրօիլ, Մօպէր արշաւախումբը, եւ վերջերս Ռէն-Հօրթանս մարտանաւով կղզին եկող գիտունները. բայց նորէն տեսնելիք շատ տեղ կայ:

— Այդպէ՞ս կը կարծէք, ըսաւ հօրեղբայրս միամիտ դէմքով մը:

— Այո՛, քանի քանի լեռներ, հրաբուխներ, սառնարաններ կան ուսումնասիրուելիք. նոյն իսկ շատ հեռուն չերթալով՝ տեսէք սա գագաթը, Սնէֆէլսն է:

— Ա՛հ, ըսաւ հօրեղբայրս, Սնէֆէլսը:

— Այո՛, ամէնէն հետաքրքրաշարժ հրաբուխներէն մին, որու խառնարանը սա կայն այցելող մը չէ եղած:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամիս ամսայ 1ին, 10ին եւ 20ին					
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ		ԳԱՆՈՒՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՄԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »			Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼԻՍ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ		ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԶԱՏՏԷՍԻ		ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 ըուպի			Տարեկանը	10 ձրանը
		ԹԻԼ 61			

Ձեռքի կը ծախուի հաւոր 40 փարայ

- Մարաժ է :
- Հինգ հարիւր տարիէ ի վեր :
- Միտքս նոր բան մը ձգեցիք, ըսաւ հօրեղբայրս, ոտքը ոտքին վրայ ամուր բըռնելով, որպէս զի ուրախութենէն վեր չը ցատքէ : Գէշ չըլլար երթանք տեսնենք այդ Սէֆէլ... Ֆէսէլ... Ի՞նչպէս ըսիք :
- Սնէֆէլս, պատասխանեց Պ. Ֆրիտ-ըիքսըն :

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)



19. — ՀԱՆԵԼՈՒԿ

1.	×	.	.	.	.	.	.
2.	.	×	.	.	.	.	.
3.	.	.	×	.	.	.	.
4.	.	.	.	×	.	.	.
5.	.	.	.	.	×	.	.
6.	.	.	.	.	.	×	.
7.	.	.	.	.	.	.	×
8.	.	.	.	.	×	.	.
9.	.	.	.	×	.	.	.
10.	.	.	×	.	.	.	.
11.	.	×	.	.	.	.	.
12.	×	.	.	.	.	.	.

1. Ծովային ձկան մը անուն : 2. Ժամանակը չափող գործիք մը : 3. Մարդկային աչքը այլ եւս բան մը չտեսներ : 4. Մահացու ախտ մը : 5. Երկու դար տեսնող ծովակալ մը : 6. Համեղ պտուղի մը տունկը : 7. Կրակ յառաջ բերող միջոցներէն մին : 8. Սեւուկ փոշի մը, որ մոռցածդ միտքդ բերելու կը ծառայէ : 9. Անոյշ հոտով ծաղիկ մը : 10. Բնական եւ օդային երեւոյթ մը : 11. Վեր ելլելու միջոց մը : 12. Սոյն տողերը քեզի ծանօթացնող արհիտուարը :

Եթէ յարմար լաւերը գտնելով թուանշաններու կարգաւ իրենց տեղերը դէք, խաչանիշներուն վրայ ինկող գիրերը, վերէն վար կարդացուելով նըշանաւոր բնեւեախոյզի մը անունը կուտան :

Խ Ն Դ Ի Ր 20.

Ապացուցանել թէ՛ երբ $(p^2 - 1)p$ ձեւին մէջ p գրին տեղ անդոյգ թուանշան

մը դնենք և նշանակուած գործողութիւնները կատարենք, ելած թիւը ճշդիւ կը բաժնուի 24-ով :

(Սոյն խնդիրը լուծելու համար շատ բարձր բաներ գիտնալու պէտք չկայ, քիչ մը տեսական թըւաբանութիւնը մանցցող տղան, կամ նոյն իսկ պարզ թուաբանութիւնը լաւ մը սորվող աշակերտը շատ դիւրութեամբ կրնայ պատասխանել :



ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Հիւսէյնիկ, Կ. Մ. Յ. — Ձեր նախորդ նամակին համեմատ առաջին թիւէն սկսեալ հինգական օրինակ կը զրկուի ձեզ. նոյնպէս տրուած զատ հասցէին ալ մէկ օրինակ :

Կեսարիա, Վ. Ս. Էֆ. Բ. — Ստացանք, շնորհակալ ենք : Ղրկուեցաւ 1-9 թիւերը :

Սիս, Գ. Մ. Էֆ. Բ. — Ստացանք, շնորհակալ ենք : Ցրդ. թիւէն սկսեալ զրկուեցաւ :

Ատանա, Կ. Ս. Էֆ. Ս. — Ստացանք, շնորհակալ ենք : Ղրկուեցաւ 1-9 թիւերը :

Մալաթիա, Գ. Յ. Էֆ. Բ. — 1-9 թիւերը ղըրկուեցան : Շնորհակալութիւն ձեր ջանքերուն :

Կարին, Տ. Էֆ. Բ. — Ղրկուեցաւ 1-9 թիւերը : Խորին շնորհակալութիւն ձեր աջակութեան :

Կեսարիա, Լ. Ս. Էֆ. Բ. — Ստացանք, շնորհակալ ենք, զրկուեցան 1-9 թիւերը :

Եւդոկիա, Խ. Գ. Էֆ. Բ. — Ստացանք նամակնիդ, շնորհակալութիւն ձեր ջանքը : համար, զրկուեցաւ 1-5 թիւերը :

Վէզիր-Քէօփրիւ, Յ. Ս. Էֆ. Գ. — Բուրաստանի 1837. 1:83 տարիները կը զտուին. բոսնի ծախքով մէկ օրինակը 13 ղըշ է : Ձեր խորաւոր Հանրագիտականը նախորդ շաբաթ զրկուած էին :

Մանիս, Գ. Էֆ. Մ. — Ստացանք, կը վճարուին : Խնդրածնիդ կը զրկուի :

Խարբերդ, Ռ. Էֆ. Չ. — 1-9 ղրկուեցան :

ՈՐՏՈՒՏԷՐ — ԽՄՐԱԴՐԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն Շ Ա Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի ածանութեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խտտապահանջ թէյի սիրահարներու : ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւնները կը կատարուին ամենայն ճշդութեամբ :

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անդամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, Ճէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի էոյս մթերք մը :

Ա Ժ Ս ՚ Ն

Ա Ժ Ա ՚ Ն

Ա Ժ Ա ՚ Ն

ՆՈՐ ԴՊՐՈՅԻ ԵՍԹՆԵՐՈՐԴ պրակը լոյս տեսաւ և այս շարժու պիտի ղրկուի բաժանորդներուն :

Այս է. պրակին մէջ դրուած է նաեւ նիւթերու բաժանումն ու ժամանակացոյցը :


Բաժանորդագիրն է 25 դահեկան :

Դիմել ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՕՐԱՍԱՆՏԵԱՆ ԽԱՆ, Սիբեկի, Կ. Պոլիս

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր Ասանա, Յակոբ էֆ. Պողոսեան Ասափազար, Ստեփան էֆ. Սափրիչեան Աֆիոն Գարահիսար, Աշոտ էֆ. Պաղպաղեան Ներսիս, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան Ջմիւռնիա Կարապետ էֆ. Մալէճանեան Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան Խարբերդ, Ռուբէն էֆ. Զարդարեան Հալեպ, Ս. էֆ. Ամատեան Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս ԲԶ. Շահինեան Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան Սիմհանի Բեյ Ս. էֆ. Կ. Կիւլպէնկեան Վեզիր Բեյ » » » Տիարպէիր, Լեւոն էֆ. Սրապեան

Հ Ն Դ Կ Ա Հ Ա Ի Ը



Թերթին խմրադրութեան ու բաժանորդագրութեան, ամէն տեսակ թղթակցութեան համար դիմել մինակ սոյն հասցէին

شاه بربریان مطبعه

استانبول اسكى ضبطيه جادهسى نو مرو ١١

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐՈՏԱՐՈՒԿԻՉ

Կ. Պոլիս Էսկի Զապրիյէ ճուսսէսի թիւ 61

NICHAN BERBERIAN
IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Eski Zabliye Djaddessi N. 61